ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԹԻՎ 7 «ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

№ 117 «02» հուլիսի 2026 թ.

«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ազատյան,

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԶՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-3» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը:

2026 թվականի հունիսի 30-ին Գնորդը ստացել է Ձեր գրությունն առ այն, որ Վաճառողը հրաժարվում է մատակարարել պայմանագրի 21-րդ, 45-րդ, 61-րդ և 62-րդ չափաբաժիններով սահմանված սապրանքները:

Ելնելով վերոգրյալից՝ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԶՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-3» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, 2026 թվականի հուլիսի 2-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 21-րդ, 45-րդ, 61-րդ և 62-րդ չափաբաժինների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ Հ. Ներսեսյան